

ՕԳՆՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Քու խաչդ թող մեզի ապաւեն ըլլայ, Տէ՛ր Յիսուս, երբ Հօրը փառքով երեւիս՝ լուսաւոր ամպերու վրայ: Այն ապեն թող ամօթով չմնանք մենք՝ քեզի յուսացողներս, այլ քու մեծ պօրութեամբդ ուրախանանք՝ քու աջ կողմդ բազմած, իբրեւ լոյսի որդիներ եւ փրկութեան ժառանգորդներ:

Օգնէ՛ մեզի, Տէ՛ր, օգնէ՛ մեզի, ո՛վ մեր փրկիչ Աստուածը, քու մեծ անունիդ փառաւորութեան համար. Տէ՛ր, փրկէ՛ մեզ եւ քաւէ՛ մեր մեղքերը, քու սուրբ անունիդ համար: Սուրբ եւ պատուական խաչիդ հովանիին տակ պարսպուած եւ խաղաղութեան մէջ պահէ քեզի ապաւինած եւ քեզի յուսացող ժողովուրդդ: Փրկէ՛ մեզ տեսանելի եւ անտեսանելի թշնամիներէն: Արժանի ըրէ՛ որ գոհութեամբ փառաւորենք քեզ, Հօրդ եւ Սուրբ Հոգիին հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԺԱՄԱԳԻՐՔ